Գ Ո Ր Ծ Ո Ւ Ղ Մ Ա Ն Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Գործուղվողի անուն, ազգանուն	Եգանյան Գագիկ
Զբաղեցրած պաշտոնը	ՀՀ ՏԿԶՆ Միգրացիոն պետական ծառայության պետ
Գործուղման վայրը	ք. Մոսկվա /Ռուսաստանի Դաշնություն/
Գործուղման ժամկետը	2017 թ. նոյեմբերի 28-29-ը

Գործուղման նպատակը - ԱՊՀ անդամ պետությունների միգրացիոն մարմինների ղեկավարների խորհրդի 21-րդ նիստին մասնակցելու համար

Քննարկված թեմաները – Միգրացիոն մարմինների ղեկավարների խորհուրդը /այսուհետ ՄՄՂԽ/ ԱՊՀ համակարգում գործող ճյուղային մարմիններից է, որը ձևավորվել և սկսել է իր աշխատանքները 2007 թվականից: Որպես կանոն յուրաքանչյուր տարի տեղի են ունենում երկու նիստեր, որոնց ընթացքում քննարկվում են ՄՄՂԽ-ի տարեկան աշխատանքային ծրագրով նախատեսված, ինչպես նաև անդամ ԱՊՀ երկրների համար միգրացիոն ոլորտում կարևորություն ունեցող հարցեր:

ՄՄՂԽ-ի նիստերը հյուրընկալել են անդամ երկրներից յուրաքանչյուրը: 2014թ.-ի հոկտեմբերի 14-ին Երևանում առաջին անգամ անցկացվեց ՄՄՂԽ հերթական նիստը:

ՄՄՂԽ կազմում ընդգրկված են Ադրբեջանի Հանրապետությունը, Բելառուսի Հանրապետությունը, Հայաստանի Հանրապետությունը, Ղազախստանի Հանրապետությունը, Ղրղզստանի Հարապետությունը, Ռուսաստանի Դաշնությունը, Տաջիկստանի Հանրապետությունը և Ուզբեկստանի Հանրապետությունը:

ՄՄՂԽ աշխատանքներում դիտորդի կարգավիճակում մասնակցում են, Թուրքմենստանի, Մոլդովայի և Ուկրաինայի միգրացիոն մարմինների ներկայացուցիչները, ինչպես նաև Արհմիությունների համընդհանուր կոնֆեդերացիայի և Միգրացիայի միջազգային կազմակերպության (ՄՄԿ) ներկայացուցիչները:

Ունեցած ելույթներ - Հերթական 21-րդ նիստի յուրաքանչյուր հարցի առնչությամբ մեր կողմից մշակվել էին տեղեկանքներ: Բացի այդ օրակարգի երկրորդ հարցի առնչությամբ՝ “Միգրացիոն վիճակագրության Հայաստանի փորձառությունը” հանդես եմ եկել ծավալուն զեկույցով (ելույթը կցվում է):

Գալիք նիստեր - ՄՄՂԽ հաջորդ՝ 22-րդ նիստը կայանալու է 2018թ-ի գարնանը Ղազախստանում, իսկ 23-րդ նիստը՝ 2018թ.-ի աշնանը՝ Ղրղզստանում:

Գործուղվող ***Գ. Եգանյան***